# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան 29.11.2023թ.

1. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2023 թվականի նոյեմբերի 29-ի հերթական նիստին.

ա) մասնակցում էին՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար, Խորհրդի նախագահ

Ա. Դանիելյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ, Խորհրդի անդամ

Ն. Տերյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Ա. Հարությունյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Է. Հակոբյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Կ. Չիլինգարյան - «Սպառողների խորհրդատվության կենտրոն» նախագահ, Խորհրդի անդամ

Է. Էլբակյան - ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր , Խորհրդի անդամ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար, Խորհրդի անդամ

Գ. Սահակյան - Խորհրդի քարտուղար

Ա. Կոտոյան – Տեսչական մարմնի ղեկավար

Ա. Մկրտչյան – Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Ա. Սարգսյան - Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ

բ) բացակայում էին՝

Կ.Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Խորհրդի անդամ

Լ.Նանուշյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Հերթական նիստի օրակարգային հարցեր.

2. Օրակարգում ընդգրկված հարցերն էին՝

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

2. Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024թ. ստուգումների տարեկան ծրագիրը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

3. Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024թ. գործունեության ծրագիրը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

4. Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի 3-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:
   Զեկուցող՝ Ա.Սարգսյան

5. Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2024թ. գործունեության ծրագիրը:
   Զեկուցող՝ Ա.Սարգսյան

6. Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. 3-րդ եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

7. ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

3. Օրակարգային հարցերի քննարկում.

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 29-ի հերթական նիստի ժամանակ որոշվեց հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի

2024թ. ստուգումների տարեկան ծրագիրը, ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024թ. գործունեության ծրագիրը, ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի 3-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը, ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2024թ. գործունեության ծրագիրը:

Խորհրդի նախագահը առաջարկեց օրակարգային հարցերի վերաբերյալ բովանդակային քննարկումներ իրականացնել Խորհրդի հաջորդ կայանալիք նիստին և անհրաժեշտության դեպքում ծրագրերում իրականացնել փոփոխություններ, իսկ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. 3-րդ եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը հավանություն տալու օրակարգային հարցի քննարկումը տեղափոխել Խորհրդի հաջորդ նիստի օրակարգ:

Որոշվեց միաձայն՝ հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024թ. ստուգումների տարեկան ծրագիրը, ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024թ. գործունեության ծրագիրը, ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի 3-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը, ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2024թ. գործունեության ծրագիրը:

Խորհրդի նախագահ՝

_____ Վ.Քերոբյան
ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ Գ.Սահակյան
ստորագրություն